ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023 թվականի N 1882 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1183-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության համապատասխան աշխատողների այցելությունների համար վճարման կարգը սահմանելու մասին» N 1183-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 2-րդ կետի 3-րդ ենթակետը «հիմնարկ» բառից հետո լրացնել «սահմանված կարգով գործուղման շրջանակներում» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1-ին կետով՝

«2.1. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված այցելությունների համար

վճարման գործընթացն իրականացվում է ծրագրային ապահովման՝ սոցիալական արագ արձագանքման տեղեկատվական համակարգի միջոցով։».

3) հավելվածի 1-ին կետից հանել «, միջավայրային գործոնները գնահատող մասնագետի» բառերը.

4) հավելվածի 2-րդ և 3-րդ կետերում «սոցիալական դեպքի վարման տեղեկատվական շտեմարանում» բառերը փոխարինել «սոցիալական արագ արձագանքման տեղեկատվական համակարգում» բառերով.

5) հավելվածի 3-րդ կետից հանել «և միջավայրային գործոնները գնահատող մասնագետները» բառերը.

6) հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Տարածքային կենտրոնների տնօրենները սույն կարգի 3-րդ կետով սահմանված հաշվետվություններն ստանալուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվա 5-րդ աշխատանքային օրը ստուգում, համադրում, ամփոփում և այցելության համար վճարումն իրականացնելու նպատակով սոցիալական արագ արձագանքման տեղեկատվական համակարգի միջոցով միասնական ձևաչափով (յուրաքանչյուր տարածքային կենտրոնի կողմից մեկ միասնական ցուցակ) ծառայություն են ներկայացնում նախորդ ամսում աշխատողների կողմից կատարված այցելությունների թվի և վճարման ենթակա գումարների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն՝ համաձայն N 2 ձևի։».

7) հավելվածի 5-րդ կետում «հաշվետվությունն» բառը փոխարինել «հաշվետվություններն» բառով.

8) հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Ծառայությունը սույն կարգի 5-րդ կետում նշված ֆինանսավորումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով տարածքային կենտրոնների տնօրենների կողմից սույն կարգի 4-րդ կետում նշված ամփոփ հաշվետվությունների մեջ աշխատողների կողմից կատարված այցելությունների թիվը, վճարման ենթակա գումարի չափը, աշխատողների բանկային հաշիվներին է փոխանցում այցելությունների համար վճարման ենթակա գումարները։».

9) հավելվածի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

10) հավելվածի N 1 ձևից հանել «/միջավայրային գործոնները գնահատող մասնագետ» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ